Չգիտէի ինչպէս անցկացնել ժամանակը: Նաւաստիի տունը դարձեալ դատարկ էր, դարձեալ ոչ ոք չէր երեւում: Բակում տիրում էր ընդհանուր լռութիւն. մի տերեւ անգամ չէր շարժւում ծառերի վրայ: Օրոայ տօթը անտանելի էր: Սագերը, գլուխները թեւերի տակ թաքցրած, քնել էին ուռիների ստոերի ներքոյ: Նրանցից մէկը միայն, իմ ոտնաձայնը լսելով, գլուխը վեր բարձրացրեց եւ ծոյլ կերպով մի քանի անգամ կչկչաց: Միւսները զարթեցան: Բայց հիւսնի արհեստանոցում, ինչպէս երեւում էր, հանգստութիւն չկար. այնտեղից դեռ ուրագի ձայն էր լսւում: Պարապութիւնից հետաքրքրոեցայ այնտեղ մտնել եւ սպասել մինչեւ Ասլանի վերադարձը: Ամբողջ արհեստանոցը լցուած էր տախտակներով եւ զանազան ատաղձներով: Այնտեղ եւ կարկատում էին նաւակները, եւ նորերն էին շինում: Ծերունի վարպետն աշխատում էր իր մի քանի աշակերտների եւ օգնականների հետ: Տեսնելով ինձ, բոլորը նայեցին իմ վրայ եւ շարունակեցին իրանց գործը: Միայն վարպետը մի կողմ դրեց կարկինը, որով տախտակի վրայ ինչ-որ չափումներ էր անում. գլուխը վեր բարձրացրեց եւ ակնոցները ուղղելով հարցրեց.

— Դուք երեւի այն ֆրանկի հե՞տ էք եկել:

— Այո՛, նրա հետ եմ եկել:

— Նստեցէք, խնդրեմ:

Ես չգիտէի որտեղ նստել, նստելու տեղ չկար: Իսկ վարպետը այդ մասին չհոգաց. նա դարձեալ վեր առեց կարկինը, սկսեց իր չափումները անէր: Ես նստեցի դռան շեմքի վրայ:

— Հովի առաջը կտրում ես, — նկատեց ինձ աշակերտներից մէկը, ճակատի քրտինքը սրբելով, — առանց դրան էլ շատ շոգ է:

Նրա նկատողութիւնը թէեւ բաւական յանդուգն էր, բայց իրաւացի էր: Ամբողջ գործարանը լոյս եւ օդ էր ընկնում միայն դռնից, ուրիշ լուսամուտ չկար. առաստաղից թէեւ երդիկ էր բացուած, բայց այնտեղից հով չէր փչում: Ես վերկացայ եւ ոտքի վրայ կանգնած մնացի: Լռութեամբ նայում էի: Գործիքների ձայնը մի այնպիսի աղմուկ էր բարձրացրել, որ անկարելի էր մի բան խօսել: Մի կողմում սղոցում էին, միւս կողմում տաշում էին, մէկը ռանդա էր տալիս, միւսը շաղափով ծակում էր, մի խօսքով ոչ ոք անգործ չէր: Անգործը միայն ես էի: Իմ դրութիւնը շատ յիմար էր: Նայեցի, նայեցի եւ վերջապէս ձանձրացայ եւ դուրս եկայ:

Գալով սրահը, որտեղ ճաշեցինք մենք, ոչ ոքի չգտայ: Ասլանը եւ վարպետ Փանոսը դեռ չէին վերադարձել: Միայն յատակի սփռոցները, առաջոայ